ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/208

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2021թ. թիվ 26/26-1/12227-2021 գրությամբ Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 23.07.2021թ. թիվ 3/27/48032-21 գրության հիման վրա, 30.07.2021թ. թիվ 26/26-1/12227-2021 գրությամբ նախաձեռնել է Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/208 ընթացակարգի շրջանակներում 12.08.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.07.2021թ. թիվ 3/27/48032-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար 04.06.2021թ. հայտարարված ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48 ծածկագրով ավտոպահեստամասերի ձեռքբերման գնման ընթացակարգի արդյունքում հայտ է ներկայացրել Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ն: Վերջինս 49-րդ չափաբաժնով համարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվել է մատակարարել ապրանքը տվյալ չափաբաժնի մասով:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք Ձեզ ձեռնարկել միջոցներ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/208 ընթացակարգի շրջանակներում 12.08.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/208 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/208 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ին մի շարք

չափաբաժինների մասով, այդ թվում նաև՝ 49-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ն ՀՀ ոստիկանությանն ուղղված 15.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48/1 ծածկագրով մրցույթի ավտոմեքենաների պահեստամասերի 49-րդ չափաբաժնի մասով (շեվրոլե նիվա էլեկտրաամբարձիչ/ապակե բարձիչ) հաղթող մասնակից էր ճանաչվել Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ն:

Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ն հրաժարվում է միայն 49-րդ չափաբաժնով պայմանագիր կնքելուց, քանի որ վերոնշյալ ավտոմեքենաների պահեստամասի նախահաշվային գինը՝ 380 000 ՀՀ դրամ է, իսկ Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել էր 16 800 ՀՀ դրամ և ակնհայտ է, որ սխալ հաշվարկի արդյունքում է Ա/Ձ-ն ներկայացրել է ինքնարժեքից ցածր գնային առաջարկ: Հիմք ընդունելով 16 դեկտեմբերի 2016 թվականի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասը՝ «առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 19.07.2021թ. Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ի կողմից ստացվել է գրություն, որով վերջինս հրաժարվել է մատակարարել 49-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2021թ. թիվ 26/26-1/12227-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 23.07.2021թ. թիվ 3/27/48032-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ին մի շարք չափաբաժինների մասով, այդ թվում նաև՝ 49-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ն ՀՀ ոստիկանությանն ուղղված 15.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48/1 ծածկագրով մրցույթի ավտոմեքենաների պահեստամասրեի 49-րդ չափաբաժնի մասով (շեվրոլե նիվա էլեկտրաամբարձիչ/ապակե բարձիչ) հաղթող մասնակից էր ճանաչվել Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ն:

Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ն հրաժարվում է միայն 49-րդ չափաբաժնով պայմանագիր կնքելուց, քանի որ վերոնշյալ ավտոմեքենաների պահեստամասի նախահաշվային գինը՝ 380 000 ՀՀ դրամ է, իսկ Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել էր 16 800 ՀՀ դրամ և ակնհայտ է, որ սխալ հաշվարկի արդյունքում է Ա/Ձ-ն ներկայացրել ինքնարժեքից ցածր գնային առաջարկ: Հիմք ընդունելով 16 դեկտեմբերի 2016 թվականի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասը «առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս կինել դրանց ինքնարժեքից»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 19.07.2021թ. Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ի կողմից ստացվել է գրություն, որով վերջինս հրաժարվել է մատակարարել 49-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը:

Այսպիսով՝ ***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց***:

Ուսումնասիրելով ՀՀ ոստիկանության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 15.07.2021թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ, հրաժարվել է մատակարարել Ընթացակարգի 49-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը, այսինքն՝ ըստ էության հրաժարվել է 49-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2021թ. թիվ 26/26-1/12227-2021 գրությամբ Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Գևորգ Շաբոյան Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**